

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ արտասահմանյան
գրականության ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 37.016:82-93

**ՄԱՆԿԱՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՑԵՐ**

Բանալի բառեր ու բառակապակցություններ. փոխհարաբերություն, հայացք, առանցքային հարցեր, գրական գործընթաց. պոեզիա, դաստիարակություն:

Ключевые слова и выражения: взаимосвязь, взгляд, ключевые вопросы, литературный процесс, поэзия, воспитание.

Key words and expressions: metaphor, perspective, key issues, literary process, poetry, education.

Մանկապատանեկան գրականությունը, լինելով գրականության անբաժանելի մասերից մեկը, ունի, սակայն, իր յուրահատկությունները՝ պայմանավորված ընթերցողի տարիքային առանձնահատկություններով: Ուստի, իր յուրահատկություններն ունի նաև նրա դասավանդումը: Ներկայացվող հոդվածում Ս. Խանգադյանի, Վ. Անանյանի, Պ. Սևակի և մի շարք մանկագիր բանաստեղծների ստեղծագործություններին անդրադարձի միջոցով փորձ է արվում կատարել մի քանի դիտարկումներ առարկայի դասավանդման հարցերի վերաբերյալ:

Ս. Խանգադյանի՝ մանուկներին հասցեագրված ստեղծագործությունների մի մասը ժողովրդական բանահյուսության մշակումներ են, զրույցներ, հեքիաթներ, ավանդապատումներ: Ս. Խանգադյանը պարզ ու անպաճույճ լեզվով, ժողովրդական խոսքի ոճական հնարանքների հմուտ օգտագործմամբ ներկայացնում է իմաստալից զրույցներ:

<<Աշուղի վիշտը>>, <<Իմաստուն տղան>> և այլն հեքիաթներում ու զրույցներում գրողը բանահյուսական պոեմների միջոցով պատանի ընթերցողի ուշադրությունը սևեռում է մարդկային գործունեության լավ ու վատ, չար ու բարի կողմերի վրա, հակադրության մեթոդով հաստատում լավը, բարին: Մի շարք հեքիաթներում ու զրույցներում Խանգադյանը դիմում է փոխաբերության՝ կենդանիների բնավորությունն ու վարքը

քննելով ընթերցողի հայացքն ուղղում է մարդու գործունեության ոլորտները, տալիս դաստիարակչական-ճանաչողական դասեր: Ս. Խանգադյանը իր պատանի հերոսների մեջ տեսնում, հաստատում և գնահատում է բարոյական բարձր արժեքները, մարդկային վեհ գծեր:

Նորագույն շրջանում իր սքանչելի վիպակներով, պատմվածքներով ու գրույցներով հանդես եկավ նաև Վ. Անանյանը:

Մեր գրականության մեջ նա որսորդական պատմվածքի, բնասիրական գրույց-նովելի, գիտարկածային վիպակի ժանրերի հիմնադիրը եղավ և հիանալի շարունակողը:

Անանյանի գիտարկածային վիպակները հենց առաջին հանդիպումից մեծ խանդավառությամբ ընդունվեցին ընթերցողների կողմից: Վախթանգ Անանյանը արկածային վեպի ավանդույթների ուշիմ ճամփորդ եղավ, վերցրեց այն, ինչ առավել հնչեղ է, արտահայտիչ, ինչ համապատասխան է նրա սկզբունքներին ու ստեղծագործական որոնումներին:

Վ. Անանյանի <<Սևանի ափին>> և <<Հովազաձորի գերիները>> գրված է մանկապատանեկան արկածային գրականության լավագույն ավանդույթների ոգով: <<Սևանի ափին>> վիպակը գրողին հուզող խնդիրների հանգուցակետն է: Դա ժամանակի, մարդու և բնության փոխհարաբերության բոլորովին նոր որակ է, որի հիմքը հայրենասիրության խոր արմատներն էին, բնության գաղտնիքները բացելու և ժողովրդին ծառայեցնելու ազնիվ մղումը:

Վիպակի պատանի հերոսները Ստիվենսոնի, Ժյուլ Վեռնի, Մայն Ռիդի հերոսներին նման ծովեր, օվկիանոսներ չեն կտրում՝ փնտրելու գանձերի կղզիներ, հանդիպելու զարմանահրաշ արկածների: Պատանի հերոսների գործողությունների ասպարեզը հայրենի լեռնաշխարհն է: Նրանք ապրում են Սևանի ափին՝ Լճավան գյուղում: Գյուղի նոր սերունդը չի կարող հավատալ այն <<հրաշքին>>, որ Գիժ սարում մի ամառ հայտնվում է անհագ ու ահեղ վիշապը, կտրում ջրի ճամփան ու ծաղկած այգեստանները վերածում անապատի: Նրանք սկսում են Գիլի լճի ուսումնասիրությունը և պարզում, որ ջուրն անհետացել է երկրաշարժի հետևանքով: Փշրվում է Մորուք Ասատուրի պապենական լեզենդը: Ժողովուրդը բացում է խորհրդավոր այրը և դարերով բանտարկված ջուրը շուր տալիս նախկին հունը:

Ինչ վերաբերվում է <<Հովազաձորի գերիները>> վիպակին, ապա այն հայ գրականության առաջին <<ռոբինզոնադն>> է, որը նույնպես արժանացավ մանկական լավագույն գրքի համամիութենական մրցանակի և թարգմանվեց բազմաթիվ լեզուներով:

Խոսելով իր գրքի մասին՝ Անանյանը նշում է. <<Իմ վիպակում հետևյալն է դրված: Ինչպես կպահեին երեխաներն իրենց, եթե Ռոբինզոնի պես փակված

մնային մի վայրում, առանց սննդի ու ապաստարանի: Այստեղ և դիմացկություն, և բնության ուժերից օգտվելու կարողություն, և դժվարությունները հաղթահարելու կամք կա>>: Պատանիների համար Հովազաձորը դառնում է կենսափորձի մի իսկական դպրոց: Նրանք այստեղ էին եկել բնության ու աշխարհի մասին որոշակի գիտելիքներով, որ հիմք է ծառայում դժվարությունների դեմ պայքարում: Վիպակի գլխավոր հաղթանակը, այնուամենայնիվ, մնում է պատանեկան կոլեկտիվի ուժի գեղարվեստական նկարագիրը:

<<Հովազաձորի գերիները>> կառուցվածքային տեսակետից ավելի կուռ, ամբողջական ստեղծագործություն է, քան <<Սևանի ափին>> վիպակը: Ինչպես <<Սևանի ափին>> վիպակը այնպես էլ <<Հովազաձորի գերիները>> հյուսված է ժողովրդական լեզվամտածողության և ոճական դարձվածքների հիմքի վրա:

1960-ական թվականները գրական վեճերի և որոնումների տարիներ էին: Դրանք առանձնապես արդյունավետ եղան արձակում: Մաթևոսյանը գրում էր համեմատաբար քիչ, բայց նրա վիպակներն ու պատմվածքները հասարակական լայն արձագանք էին գտնում ոչ միայն Հայաստանում, այլև նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններում ևս:

Մաթևոսյանն արտացոլում է ժամանակակից մարդու հոգեբանությունը:

Հրանտ Մաթևոսյանի մանկապատանեկան պատմվածքները, վիպակներն ունեն խորը հոգեբանական ազդեցություն: Երբ ընթերցում ես նյութը, առաջին հայացքից թվում է՝ սովորական գյուղական, ընտանեկան նկարագրություններ են, որոնք ունեն պարզ սկիզբ և ավարտ: Սակայն յուրաքանչյուր ընթերցող սկսում է խորհել և ընկալել, թե ինչքան դիպուկ նկարագրություններ են և շատ արդիական: Հրանտ Մաթևոսյանը մեր մանկապատանեկան արձակը <<տեղափոխում>> է հոգեբանական խոր վերլուծությունների, բարոյական բարձր չափանիշների ու արժեքների գեղարվեստականացման ոլորտները:

Նորագույն շրջանի մանկապատանեկան պոեզիան

Շարունակելով Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Դ. Աղայանի, Ա. Խնկոյանի ժողովրդական բանահյուսության անսպառ գանձարանից օգտվելու ավանդույթներն ու փորձը՝ նորագույն շրջանի մանկագիրները, բանաստեղծները հարստացնում էին իրենց զինանոցը ոչ միայն թեմատիկ ու ժանրային, այլև պոետիկայի առումով:

Այս տեսանկյունից ուշագրավ է Պ. Սևակի փորձը:

Սանուկների աշխարհը, նրանց գեղագիտական դաստիարակության, անհատականության դրսևորման, իմացական շրջանակների ընդլայնման հարցերը միշտ էլ եղել են Պ. Սևակի ուշադրությունը կենտրոնում: Եվ

պատահական չէ, որ զանազան հանդիսություններից, հորեյանական-մեծարման երեկոներից անկեղծորեն խուսափող մեծ բանաստեղծը միշտ էլ սիրով էր հանդիպում դպրոցականներին, կիսում իր մտքերը, բանավիճում՝ խուսափելով խորհրդատուի ու դաստիարակի ընդգծված կեցվածքից: Նա հարգում էր երեխաների ինքնուրույնությունը և իր տեսակետներն ու կարծիքը չէր պարտադրում նրանց: Այդպիսին է Պ. Սևակը նաև իր մանկական բանաստեղծություններում:

Պ. Սևակի մանկական գրականության հարցերով զբաղվել է դեռևս 1950-ական ովականներին: 1959թ-ին նա թարգմանել է Ջ. Ռոդարիի <<Բարև, երեխաներ>> բանաստեղծությունների ժողովածուն, այնուհետև <<Պիոներ>> ամսագրում տպագրել է մանկական բանաստեղծություններ, որոնք նրա ողբերգական մահից հետո՝ 1971-ին, տպագրվել են <<Ձեր ծանոթները>> գրքույկով: Ճիշտ է, այնտեղ գետեղված են ընդամենը 12 բանաստեղծություններ, բայց Պ. Սևակի պարագայում բանաստեղծությունների քանակը ոչ մի նշանակություն չունի: Այդ բանաստեղծություններում մանուկ ընթերցողների հետ շատ ծանոթ թեմաների շուրջ խոսում է <<Եղիցի լույսի>> հեղինակը՝ իրեն հատուկ լրջությամբ, ծանոթ երևույթների նոր մենկնաբանություններով, հստակ ու կառուցիկ, երեխայի համար պարզ ու մատչելի, սևակյան նուրբ հումորով շաղախված:

Պ. Սևակը մանկական բանաստեղծություններում ևս ցույց է տալիս կաղապարային մտածողության հաղթահարման ու գեղարվեստական մտքի թարմացման ուղիներ: Ժողովրդական ավանդապատումները, գրույցները, ծանոթ սյուժեներն ու մոտիվները ներկայացվում են նոր մեկնաբանություններով, բարձր վարպետությամբ ու ճաշակով: Դժար է առանձնապես գերազնահատել այդ բանաստեղծությունների դաստիարակչական նշանակությունը: Բանաստեղծությունները հանձնարարելի են միջին դպրոցի աշակերտներին, և պետք է նկատել, թե ինչպես է մեծ բանաստեղծը վարպետորեն ներդաշնակում բարոյական, աշխատանքային, ֆիզիկական ու գեղագիտական դաստիարակության խնդիրները: Նա յուրովի է ներկայացնում <<ուժեղ, խելոք, ատաքինի>> (Ղ. Աղայան) երեխայի դաստիարակության պահանջները, առաջարկում հետաքրքիր լուծումներ:

Ժողովրդական բանահյուսությունից երեխաներին ծանոթ սյուժեները Պ. Սևակի մոտ հարստանում են նոր կերպարներով: Պ. Սևակի բանաստեղծություններում երեխաներին ծանոթ կենդանիները, թռչունները, ծաղիկները ներկայանում են նոր կողմերով: Երեխան, օրինակ, գիտի, որ արագիլը գարնան ավետաբերն է, բայց նրա համար անսպասելի է, որ նա նաև <<օրագիրն է գարնան>>, մարդկանց <<փրկության հեռագիրը>>:

Դասականների օրինակով նորագույն շրջանի բանաստեղծներն իրենց մշակումներում բանահյուսական թեմաներն ու սյուժեները հարմարեցնում են երեխայի տարիքային ու հոգեբանական զարգացման առանձնահատկություններին: Ս. Մուրադյանի (<<Վախկոտ պարծենկոտը>>, <<Նապաստակի մուշտակը>>, <<Ուշացած արագիլը>>, <<Մկնիկ հարսնացուն>>, <<Ծաղկամանի գաղտնիքը>>, <<Ակներ>>), Պ. Խաչատրյանի (<<Ճպուռի վերջը>>, <<Սաքուն ու էջը>>, <<Կենդանիների քաղաքը>>), Լ. Սարգսյանի (<<Մոշահավը>>, <<Հորթուկը>>, <<Մեղուն>>), Էդ. Ավագյանի, Ն. Միքայելյանի, Յու. Սահակյանի, Ե. Պետրոսյանի և ուրիշների բանահյուսական թեմաների մշակումներում ակնհայտ են դասականների փորձից օգտվելու, նրանց ստեղծագործական սկզբունքները կիրառելու դրսևորումները: Հանրահայտ թեմաներն ու սյուժեները, ներկայացվում են լրացումներով, փոփոխություններով, ժամանակակից իրականությանը բնորոշ պատկերներով: Հեքիաթի, առակի բովանդակությունը պայմանավորվում է ռեալ իրականությամբ և յուրաքանչյուր դեպքում ներկայացվում նոր տարբերակներով, որոնց մեջ, ճիշտ է, գաղափարը և սյուժեի կառուվցածքը հիմնականում պահպանվում են, ընդհանուր մոտիվները կրկնվում, բայց գաղափարը ներկայացվում է նոր տեսանկյունով, սյուժեն մասնակի կամ լիովին թարմացվում է:

Բոլորիս քաջ հայտնի <<Ճպուռն ու մրջյուն>>-ի սյուժեի լրացումներով, նոր տարրերի ներմուծմամբ Պ. Խաչատրյանը բացահայտում է ժամանակակից հարաբերություններ, ստեղծում ժամանակակից միջավայր, կոլորիտ: Մրջյունը քանդում է հին տունն ու թթենու տակ նորն է կառուցում.

Ինչի՞ դ պետք, միջնորդի:

-Ամուսնանամ ես պիտի,

Երեխաներ ունենամ:

-Խելք հավաքի, բարեկամ,

Մոլորվել ես էս անգամ:

Ճպուռին տարօրինակ են թվում տեսակը պահապանելու (Յեղս ո՞րն է, այ սանիկ, կամ՝ Ընտանիքը ցավ է նոր, Ուսի բեռ է ահավոր, մի այլ դեպքում՝ Կինն ինչ է որ, վզի թոկ), մարդավարի ու ապահով ապրելու, ամեն ինչ աշխատանքով ձեռք բերելու մրջյունի ցանկությունները: Մեզ քաջ հայտնի Ճպուռի օրինակով <<ինքն իրեն մոռացած, հոր քսակը լայն բացած>>.

Աջ խմում է, ձախ լափում,

Թրիվ գալիս ծովափում,

Ու պարում էր շատ հանգիստ

Էլ վերվերի, էլ թվիստ...

Հանգուցալուծումը կատարվում է դասական օրինակով, բայց ժամանակին յուրահատուկ հանգամանքներում, բնորոշ իրավիճակներում անբան ճպուռը դառնում է մուրացկան (Հյուրասիրեց ճպուռին, Հետը դրեց թարմ լավաշ, շոր-մոր տվեց հնամաշ): Այնուհետև՝ Վերջին ուժը սպառեց, Շունչը փչեց ու սառեց:

Հանրահայտ են, օրինակ, ծիծաղի բալասանող հատկանիշները, և այդ թեմայով բազմաթիվ գործեր են գրվել: Պ. Խաչատրյանի <<Արջի ծիծաղում>> բժիշկ ընձուխտը անքնությունը նույնպես ծիծաղով է բուժում (Օրվա մեջ յոթ ժամ պիտի ծիծաղես), հյուրընկալության կարգին համաձայն (Հյուրը որ կա՝ աստծունն է) բաղն իր բնում տեղ է տալիս կկվին, որը հետո տիրանում է նրա բնին (Ես բաղ ու մաղ չեմ ճանաչում, Տեղ չունեմ , չէ. Գնաս բարով), աղվեսը կարգվում է հավանոցի պահակ: Վերցնելով դասական թեմաները՝ բանաստեղծը ստեղծում է ժամանակակից կոլորիտ, ընձուխտը արջին քննում է պոլիկլինիկայում և ախտորոշում՝ ճնշումը չափելով ու սիրտը նկարելուց հետո, կկուն տառապում է հողացավով, արջը կրկես է գնում:

Հետադարձ կապ՝

Առաջադրանքներ

Կարդալ և վերլուծել Վ. Անանյանի <<Սևանի ափին>> և <<Հովազաձորի գերիները>> վիպակները:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ ընդհանրություն կա << Սևանի ափին>> և <<Հովազաձորի գերիները>> վիպակների միջև
2. Որո՞նք են Ս. Խանգաղյանի մանուկներին հասցեագրված գործերը
3. Ի՞նչ ճանաչողական նշականություն ունի Ս. Մուրադյանի հայրենասիրական մոտիվով գրված բանաստեղծությունը:
4. ***ԹԵՄԱՅԻ ԳԵԱՀԱՏՈՒՄ/ԱՆԴՐԱԴԱՐՁ***
5. Գնահատման թերթիկ
6. Գրի՞ր դասախոսության ամենակարևոր գաղափարը
7. Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

Հիմնական գրականություն

1. Մ. Գիլավյան, Նորագույն շրջանի հայ մանկական պոեզիայի զարգացման միտումները, Ե., 2002 էջ 11-90
2. Մ. Գիլավյան Ժամանակակից հայ մանկագիր-բանաստեղծներ, Ե., 2004. էջ 5-65

Առաջարկվող գրականություն

1. Լ. Կարապետյան, Դասը վարում է գրողը, Ե., 2002, Ս
2. Մ. Գիլավյան, Նորագույն շրջանի հայ մանկական պոեզիայի զարգացման միտումները, Ե., 2002 էջ 11-90
3. Մ. Գիլավյան, Սերո Խանզադյան մանկապատանեկան արձակը, Գարուն 6-7 2014

Մ. Գիլավյան

**Մանկական գրականության դասավանդման մի քանի հարցեր
Ամփոփում**

Հոդվածում քննարկվում են հայ մանկապատանեկան արձակի ու պոեզիայի/ 20-րդ դար/դասավանդման մի շարք հարցեր, որոնք օգտակար կարող են լինել ուսանողների, մանկական գրականության դասավանդողների համար:

М. Гилавян

**К вопросу о преподавании детской литературы
Резюме**

В статье затрагивается ряд вопросов, связанных с армянской детской и юношеской прозой и поэзией XX века, которые могут быть полезны для студентов и преподавателей детской литературы.

M. Gilavyan

**On some issues of teaching child and adolescent literature
Summary**

The paper dwells on the 20th-century Armenian prose and prose for children and adolescents which might be useful for students, for lecturers of child's literature, in particular.